



ԳԱՆԱՏԱՅԱՅՈՅ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



GANTEGH BULLETTIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GREGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 8 ԴԵՍԿՏԵՄԲԵՐ 2019

140

DIMANCHE, 8 Décembre 2019

Գ. Կիրակի Յիսնակի 3-ème Dimanche de l'Avent



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (1.1-12)
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (14.12-24)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 THESSALONICIENS: 1.1-12

LUC: 14.12-24

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ. ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de choeur: Sarkis Barsemian

Organist: Houry Manoukian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

**LES LECTURES
DE DIMANCHE**



**THE SUNDAY
READINGS**

2 ԹԵՍԱԴՈՆԻԿԵՑԻՆԵՐ 1.1-12

1Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Բրիստոսով. 2Հնորից եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Բրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ'ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, 3անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Բրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, 4գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: 5Որովհետեւ մեր անտարանը քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ գորութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, 6եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին ուրախութեամբ: 7Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ են, 8որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պետք չունինք որեւէ բան խօսելու. 9քանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՜ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, 10եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ'ազատէ մեզ գալիք բարկութենէն:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14.12-24

12Զինք հրակիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարէնը չիրակիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: 13Հապա երբ կոչունք կը սարքես՝ հրակիր՛ աղքատները, պակասաւորները, կաղերը եւ կոյրերը, 14ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ անոնք չեն կրնար փոխարէնը հատուցանել քեզի.

արդարեւ արդարներուն յարութիւն առած ատենը փոխարէնը պիտի հատուցանուի քեզի»:

15Յետը սեղան նստողներէն մէկը, երբ լսեց ասիկա, ըսաւ անոր. «Երանի՛ անոր, որ հաց պիտի ուտէ Աստուծոյ թագաւորութեան մէջ»:

16Ինք ըսաւ անոր. «Մարդ մը սարքեց մեծ ընթրիք մը, ու հրաւիրեց շատ մարդիկ: 17Ընթրիքի ժամունա՝ դրկեց իր ծառան, որպէսզի ըսէ հրաւիրեալներուն. “Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է”: 18Բոլորն ալ միաբերան սկսան հրաժարի: Առաջինը ըսաւ անոր. “Ես արտ մը գնեցի, եւ հարկ է որ մեկնիմ ու տեսնեմ զայն. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: 19Միւսը ըսաւ. “Յինգ զոյգ եզ գնեցի, եւ կ'երթամ որ փորձարկեմ զանոնք. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: 20Միւսը ըսաւ. “Կնոջ մը հետ ամուսնացայ. ուստի չեմ կրնար գալ”: 21Ծառան եկաւ ու պատմեց իր տիրոջ այս բաները: Այդ ատեն տանուտերը բարկացաւ եւ ըսաւ իր ծառային. “Շուտով դուրս ելի՛ր՝ դէպի քաղաքին հրապարակներն ու փողոցները, եւ հո՛ս բեր աղքատները, պակասաւորները, կաղերն ու կոյրերը”: 22Ծառան ալ ըսաւ. “Տէ՛ր, կատարուեցաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ”: 23Տերը ըսաւ ծառային. “Դո՛ւրս ելի՛ր դէպի ճամբաներուն գլուխներն ու ցանկապատերը, եւ հարկադրէ՛ գտածներդ՝ որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի”: 24Որովհետեւ, կ'ըսեմ ձեզի, այդ հրաւիրուած մարդոցմէն ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքես»:

2 Thessaloniens 1.1-12

1Paul, et Silvain, et Timothée : à l'Eglise des Thessaloniens qui est en Dieu notre Père, et en [notre] Seigneur Jésus-Christ; 2Que la grâce et la paix vous soient données de la part de Dieu notre Père, et de la part du Seigneur Jésus-Christ.

3Mes frères, nous devons toujours rendre grâces à Dieu à cause de vous, comme il est bien raisonnable, parce que votre foi s'augmente beaucoup, et que votre charité mutuelle fait des progrès. 4De sorte que nous-mêmes nous nous glorifions de vous dans les Eglises de Dieu, à cause de votre patience et de votre foi dans toutes vos persécutions, et dans les afflictions que vous soutenez;

5Qui sont une manifeste démonstration du juste jugement de Dieu; afin que vous soyez estimés dignes du Royaume de Dieu, pour lequel aussi vous souffrez. 6Puisque c'est une chose juste devant Dieu, qu'il rende l'affliction à ceux qui vous affligent; 7Et [qu'il vous donne] du relâche à vous qui êtes affligés, de même qu'à nous, lorsque le Seigneur Jésus sera révélé du Ciel avec les Anges de sa puissance; 8Avec des flammes de feu, exerçant la vengeance contre ceux qui ne connaissent

point Dieu, et contre ceux qui n'obéissent point à l'Évangile de notre Seigneur Jésus-Christ; 9Lesquels seront punis d'une perdition éternelle, par la présence du Seigneur, et par la gloire de sa force; 10Quand il viendra pour être glorifié en ce jour-là dans ses saints, et pour être rendu admirable en tous ceux qui croient; parce que vous avez cru le témoignage que nous vous en avons rendu. 11C'est pourquoi nous prions toujours pour vous, que notre Dieu vous rende dignes de [sa] vocation, et qu'il accomplisse puissamment [en vous] tout le bon plaisir de sa bonté, et l'œuvre de la foi. 12Afin que le Nom de notre Seigneur Jésus-Christ soit glorifié en vous, et vous en lui, selon la grâce de notre Dieu, et du Seigneur Jésus-Christ.

Luc 14.12-24

12 Il disait aussi à celui qui l'avait convié : quand tu fais un dîner ou un souper, n'invite point tes amis, ni tes frères, ni tes parents, ni tes riches voisins; de peur qu'ils ne te convient à leur tour, et que la pareille ne te soit rendue. 13Mais quand tu feras un festin, convie les pauvres, les impotents, les boiteux et les aveugles; 14Et tu seras bienheureux de ce qu'ils n'ont pas de quoi te rendre la pareille; car la pareille te sera rendue en la résurrection des justes.

15Et un de ceux qui étaient à table, ayant entendu ces paroles, lui dit : bienheureux sera celui qui mangera du pain dans le Royaume de Dieu.

16Et [Jésus] dit : un homme fit un grand souper, et y convia beaucoup de gens. 17Et à l'heure du souper il envoya son serviteur pour dire aux conviés : venez, car tout est déjà prêt. 18Mais ils commencèrent tous unanimement à s'excuser. Le premier lui dit : j'ai acheté un héritage, et il me faut nécessairement partir pour l'aller voir; je te prie, tiens-moi pour excusé. 19Un autre dit : j'ai acheté cinq couples de bœufs, et je m'en vais les éprouver; je te prie, tiens-moi pour excusé. 20Et un autre dit : j'ai épousé une femme, c'est pourquoi je n'y puis aller. 21Ainsi le serviteur s'en retourna, et rapporta ces choses à son maître. Alors le père de famille tout en colère, dit à son serviteur : va-t'en promptement dans les places et dans les rues de la ville, et amène ici les pauvres, et les impotents, et les boiteux et les aveugles. 22Puis le serviteur dit : Maître, il a été fait ainsi que tu as commandé, et il y a encore de la place. 23Et le maître dit au serviteur : va dans les chemins et le long des haies, et [ceux que tu trouveras], contrains-les d'entrer, afin que ma maison soit remplie. 24Car je vous dis qu'aucun de ces hommes qui avaient été conviés ne goûtera de mon souper.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ, Ամեն

Սիրելի բարեպաշտ հայորդիք, այսօրուան ընթերցուածքը մեր Տէր Յիսուս Զրիստոսի պատմած առակներէն մէկն է, որ կը կոչուի «Մեծ խնճոյքի առակը» կամ «Հարսանիքի հրաւիրուածներու առակը» եւ կը հանդիպինք միայն Ղուկասի (14:16-24) եւ Մատթեոսի (22:1-10) աւետարաններուն մէջ: Առակին մէջ կը պատմուի այն մասին, որ թագաւոր մը մեծ խնճոյք կը կազմակերպէ ու երբ իր ծառաներուն կ'ուղարկէ հրաւիրեալները կանչելու՝ անոնք զանազան պատճառաբանութիւններ գտնելով՝ կը հրաժարին արքայի հրաւերէն, ոմանք ալ նոյնիսկ կը սպանեն զրկուած ծառաները: Այն ատեն, կը բարկանայ արքան ու ծառաներուն կը պատուիրէ ճաշկերոյթի հրաւիրել բոլոր այն մարդոց, որոնք կը հանդիպին իրենց ճամբուն վրայ, աղքատ կամ հարուստ, թէ չար, թէ բարի, հիւանդ կամ առողջ: Եւ ծառաները հնազանդելով տիրոջ հրամանին, կը հրաւիրեն բոլորը իրենց տունը:

Ահա՛, այսպէս էր Տիրոջ պատմած առակին բովանդակութիւնը, սիրելի՛ հաւատացեալ եղբայրներ ու քոյրեր, բայց պիտի նշեմ, որ Աստուծոյ Որդին ոչ միայն այս առակով, այլ բազմաթիւ անգամներ անդրադարձած է այս թեմային՝ յոյժ կարեւորելով զայն: Ակնյայտ է, որ այդպէս ալ պէտք էր ըլլար, քանի որ այս առակին մէջ կը նկարագրուի Երկնային Արքայի՝ Ամենակալ Աստուծոյ մտադրութիւնը իր արարածներուն նկատմամբ:

Վստահ եմ բոլորիս համար այլ պարզ է, որ առաջին հրաւիրեալները հրեայ ժողովուրդն էր, որ Աստուծոյ ընտրեալ ազգ կը համարուէր եւ Աստուծոյ Մեսիային ընդունելով՝ պէտք է օրինակ հանդիսանար միւս բոլոր ազգերուն համար ու անոնց այլ իր հետ Տիրոջ ճանապարհով տանէր: Սակայն, ինչպէս կը պատմուի առակին մէջ ու հետագային ցոյց կու տայ պատմութիւնը՝ անոնք մերժեցին Երկնային Արքային հրաւերը՝ չընդունելով Անոր Որդիին, աւելին՝ տանջելով ու խաչի վրայ անարգ մահուան դատապարտելով: Հետագային հալածուեցան ու չարչարանքներու ենթարկուեցան նաեւ Տիրոջ միւս ծառաները՝ առաքեալներն ու անոնց հետեւորդները, որոնք լծուէր էին իրենց Տիրոջ հրաւերը բոլորին հասցնելու գործին: Սակայն պէտք է կանգ առնեմ այստեղ ու ձեր ուշադրութիւնը հրաւիրեմ այն փաստին վրայ, որ Արքան հրաւիրեց բոլորին: Այո՛, սիրելիներ, բոլորին: Այսինքն խօսքը ոչ միայն Յիսուս Զրիստոսի երկրային կեանքի ժամանակաշրջանին մասին է, այլ՝ այժմեական է բոլոր ժամանակներուն եւ կը վերաբերի հիմա այստեղ գտնուող մարդոց իւրաքանչիւրին: Ամենախնամ Տէրը պատրաստ է իր Արքայութիւնը, հրաւիրէր է ու կը շարունակէ հրաւիրել մեզմէ իւրաքանչիւրը եւ կը սպասէ, թէ ի՞նչ պատասխան կու տանք իրեն: Չէ՞ որ, երբ ամէն օր կը հնչեն եկեղեցիին զանգերը՝ կանչելով մեզ Սուրբ Պատարագի կամ ամենօրեայ ծառայութեան՝ կը հնչէ նաեւ Տիրոջ հրաւերը՝ մէկ կողմ թողնելու աշխարհիկ հոգերն ու գործերը եւ Աստուծոյ տուն երթալու: Բազումողորմ Աստուած բազմաթիւ ու զանազան կերպերով մեզի հրաւեր կ'ուղարկէ, կը թակէ մեր սրտերուն դռները: Զանի անգամ Ան արթնցուցած է մեր խիղճը, քանի անգամ սթափեցուցած է մեզ, որ ուշքի գանք, հասկնանք, որ սխալ ճամբու վրայ ենք եւ ի՞նչ պատասխան մենք Անոր տուէր ենք: Ազնիւ ըլլանք մենք մեզի հետ, սիրելի՛ հաւատացեալներ, ու կը տեսնենք, թէ քանի-քանի պատճառներ պատրաստ ենք յօրինել՝ մերժելու համար Տիրոջ հրաւերը ու սին արդարացումներ կը փնտրենք մեզի համար: Երկնային Արքան, ողջ տիեզերքի Արարիչը, Ամենակարողն ու Ամենակալը մեզ իր տունը կը հրաւիրէ, իսկ մենք կ'ըսենք. «Սպասէ՛, Տէ՛ր, հիմա ժամանակ չունինք: Գործերը կ'աւարտենք, յետոյ կու գանք, անձնական կեանքը կը դասաւորենք, յետոյ կու գանք, առողջական կամ ֆինանսական վիճակը ուղղենք, յետոյ կու գանք, յետոյ կ'աղօթենք, յետոյ կը փառաբանենք Զեզ» եւ «յետոյ»-

ներու այս շարքը կրնանք անվերջ թուել, միայն թե չհետեւինք Տիրոջ ձայնին: Եւ այսպէս շարունակելով՝ օր մը կը տեսնենք, որ մեր կեանքը անցաւ մէկ ակնթարթի պէս ու մենք այդպէս ալ պատրաստ չեղանք Տիրոջ խնճոյքին մասնակցելու: Յիսուս Զրիստոս կ'ըսէ. «Նախ Աստուծոյ Արքայութիւնը խնդրեցէք» (Մտթ. 6:33), իսկ մենք միշտ կը մոռնանք այդ կարեւորագոյն, կենսական արժէք ունեցող «նախ» բառին մասին, որուն սակայն պէտք է սեւեռած ըլլար մեր ողջ ուշադրութիւնը: Եւ տրտմելով՝ Տէրը կ'ըսէ. «Կանչուածները շատ են, բայց ընտրեալները՝ քիչ» (Մտթ. 22:14): Ցաւօք սրտի քիչ են անոնք, որոնք կը լսեն Տիրոջ ձայնը ու կը հետեւին անոր: Քիչ են Աստուծոյ խնճոյքի հրաւերը ընդունածները: Եւ այդ մեծ ցաւ է Ամենակալին համար, քանի որ Ան երկիր իջաւ, մարմնացաւ, իր սուրբ արիւնը թափեց, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրը փրկուի ու Աստուծոյ Արքայութեան արժանանայ: Ամենախնամ Տէրը կը շարունակէ սիրել մեզ եւ իւրաքանչիւր պահուն կոչ կ'ընէ սթափուիլ, ուշքի գալ, չվնասել մենք մեզի, քանի որ Տիրոջ պատուիրանները միայն մեր օգտին համար տրուած են: Մեզ վտանգներէն, սխալներէն ու կործանումէն ետ պահելու ու յաւիտենական երանութեան ճամբուն վրայ կանգնեցնելու համար: Իսկ մենք ժամանակաւոր երկրային ուրախութիւնները կամ հոգերով զբաղուիլը կը գերադասենք Արարիչին նուիրած յաւիտենական երանութենէն: Հիմա ձեզմէ ոմանք մի գուցէ չհամաձայնին ինծի հետ՝ ըսելով, որ իրենք միշտ եկեղեցի կու գան ու կ'աղօթեն Աստուծոյ, բայց եթէ խորքը նային իրենց մղումներուն, իրենց հոգին ազնուութեամբ ուսումնասիրեն, ապա ի՞նչ կը տեսնեն: Աղօթքներուն մեջ հիմնականին ինչ բան որ կ'ուզենք Աստուծմէ, կը գանգատինք մեր դժուարութիւններէն, եկեղեցի կը մտնենք նախանձի, չարութեան, ատելութեան, հպարտութեան եւ այլ տարատեսակ թոյներով թունաւորուած հոգիներով, Աստուծոյ առջեւ կը կանգնինք՝ առանց զոջումի ու ապաշխարութեան...

Այստեղ պէտք է կրկին կանգ առնեմ, սիրելի՛ հաւատացեալներ, ու յիշեցնեմ Յիսուս Զրիստոսի այն խօսքերը, թէ «իւրաքանչիւրին կը յատուցուի ըստ իր գործերուն» (Մտթ. 16:26), այսինքն, եթէ Տիրոջ ձայնը հասեր է ձեզի, մտեր էք Աստուծոյ եկեղեցին, ստացեր էք որոշ գիտելիքներ, ապա Տէրը մեզմէ ըստ մեր գիտցածին պիտի հարցնէ: Երբ մահուընէ յետոյ կանգնինք Աստուծոյ առջեւ, ապա պիտի ըսէ մեզի. «Դուն գիտէիր այս մասին, սակայն չըրիր» ու մենք ոչինչ չենք ունենար պատասխանելու:

Եւ վա՛յ մեզի, եթէ մարգարէին հետեւեալ խօսքերը մեզի ալ վերաբերին. «Տերը կ'ըսէ. «Այս ժողովուրդը մօտ է ինծի իր բերանով, իր շրթունքներով կը մեծարէ զիս, բայց սրտով հեռացեր ու մեկուսացեր է ինձմէ» (Եսայի 29:13):

Ուղղափառ եկեղեցւոյ Սուրբ Զայրերէն մեկուն մասին կը պատմեն, որ երբ ներկայ գտնուեր է ճեմարանի քննութիւններէն մեկուն ժամանակ, ապա ուսանողներէն մեկուն հարցուցեր է. «Ըսէ ինծի, ինչպե՛ս մտադիր ես փրկուիլ»: Ուսանողը պատասխաներ է. «Մտադիր եմ իմ խոնարհութեամբս փրկուիլ»: Զոգեւորականը խստութեամբ նայեր է անոր ու ըսեր. «Պատասխանդ իր մէջ արդէն հպարտութիւն կը պարունակէ: Ի՞նչ է, կը կարծես թէ արդէն այնպիսի խոնարհութիւն ձեռք բերեր ես, որ կրնայ քեզ փրկե՛լ: Ես ընդհանրապէս այդպիսի խոնարհութիւն չեմ տեսներ քու մէջդ»: Յետոյ երկրորդին կը հարցնէ, թէ ան ինչպէս կը պատրաստուի փրկուելու: Ուսանողը պատասխաներ է. «Ձեր աղօթքներով, Սրբազան Զայր»: Այս անգամ վրդովուեր է Աստուծոյ սպասաւորը՝ ըսելով. «Այսքան երիտասարդ ես, բայց արդէն սորվեր ես կեղծաւորութիւն ընել, իսկ յետոյ ի՞նչ պիտի ըլլայ քու վիճակդ»: Եւ միայն երրորդ ուսանողն է, որ նոյն հարցին պատասխաներ է, թէ Զրիստոս Փրկիչին չարչարանքներն են ի զօրու զինք փրկելու, որուն ալ Սուրբ Զայրը պատասխաներ է. «Ահա՛ միակ ճշմարիտ պատասխանը: Եւ այլ պատասխան չեր կրնար ըլլալ»:

Այսքանով ըսուած է ամէն բան, սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ ի Զրիստոս: Աստուծոյ Միածին Որդին, իր փրկչական սուրբ արիւնով, ազատագրեց մեզ մեղքի գերութենէն, փրկագնեց մահուան ճիրաններէն ու յաւիտենական կեանքի ճամբան բացաւ մեր առջեւ: Եւ մեզի կը մնայ չմերժել Անոր հրաւերը, ընդառաջ երթալ Անոր անգին զոհաբերութեան ու մեր ապրած կեանքով ցոյց տալ այն երախտագիտութիւնը, որ պէտք է զգանք Տիրոջ հանդէպ: Մեր ապրած կեանքով ցոյց տանք, որ հասկցեր ենք ճշմարիտ քրիստոնէայ ըլլալու իրական իմաստը, այն է՝ մշտական ինքնազոհաբերութեան երթալու մեր պատրաստակամութիւնը: Մենք պէտք է զոհաբերական սեր ունենանք թէ՛ առ Աստուած եւ թէ՛ առ մարդիկ: Երբ կ'ըսենք զոհաբերական սեր ունենալ առ Աստուած, կը նշանակէ վճռականութիւն ունենալ անելի շուտ մեռնելու, քան Աստուծոյ առջեւ մեղք գործելու: Եւ երբ առ մարդիկ ունեցած զոհաբերական սիրոյ

մասին կը խօսինք, ապա ներման գաղափարին կը յանգինք: Այդ կը նշանակէ ներել քեզի վիրաւորողին ու աղօթել անոր փրկութեան համար: Իրական խոնարհութիւն դրսեւորել: Եկեղեցւոյ Սուրբ Հայրերը կ'ըսեն, որ ճշմարիտ խոնարհ մարդը խաչեալ Զրիստոսն հեռու կանգնած չի կրնար ըլլալ...

Արդ, սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, այսօրուան Սուրբ Պատարագին աւարտէն յետոյ, երբ դուք ելլենք եկեղեցիէն, լրջօրէն մտածենք այն մասին, որ Տէրը մեզ ալ հրաւիրել է: Բայց արդե՞օք մենք պատրա՞ստ ենք այդ հրաւերը ընդունելու: Արդե՞օք պատրա՞ստ ենք մեղքէն ու աշխարհի աղտոտութենէն հրաժարելու ու արժանի ըլլալու Երկնային Թագաւորին խնճոյքին մասնակցելու: Եւ եթէ անկեղծ ըլլանք մենք մեզի հետ ու մեր պատասխանը «ոչ, արժանի չեմ» ըլլայ, ապա չլուսահատինք, սիրելիներ: Իմաստութեամբ օգտագործենք այն ժամանակը, որ Սիրող Հօր կողմէն յատկացուել է մեզի՝ ազնիւօրէն քննելու ու վերաիմաստաւորելու մեր կեանքը: Լեցուկնք վճռականութեամբ՝ ամէն զինով մեղքէն հրաժարելու, զինուկնք համբերութեամբ՝ Տիրոջ օգնութիւնն ու ողորմածութիւնը աղերսելու մեր աղօթքներուն մէջ ու խոնարհութեան զգեստները հագնիկնք՝ իրապէս զոջալու, ապաշխարելու եւ իւրաքանչիւր պարագային փառաւորելու՝ Հօրը, Որդին եւ Սուրբ Հոգին, այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Օրհնութեամբ՝

S. Դաւիթ քահանայ Սարգսրեան

Հոգեւոր հովիւ

Résumé du Sermon

Au nom du Père, du Fils et de Saint Esprit

Dieu nous invite souvent de le rencontrer et de souper avec lui.

Par ailleurs Il nous rencontre dans la prière, dans la communion et dans les épreuves de nos vies.

Dans l'Évangile de St Luc nous trouvons une parabole décrivant une invitation du Maître, adressée aux notables, à un festin .Et plusieurs le déclinent pour des raisons de travail ou d'autres obligations.

Alors le Maître fait appel aux mendiants, estopies et pauvres qui se rendent à son invitation.

Et Jésus dit: "Heureux les pauvres en esprit, car le royaume des cieux est à eux".

La seule condition pour nous est de venir à la table du Seigneur et de reconnaître que nous sommes pauvres devant Dieu.

Ne cherchons plus des excuses pour décliner une invitation à la table du Seigneur.

En Foi et en Prière

Père David Margaryan

Prêtre paroissial

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտե՞ի՞ք թե՛.-

- **Ի՞նչ է կը հասկնանք «հաղորդուիլ» ըսելով:**

«Հաղորդուիլ» կը նշանակէ բանի մը մասնակից կցորդ ըլլալ, իսկ հոգեւոր առումով խորհրդաբար մեր միացումն է Յիսուս Քրիստոսի հետ, երբ Ս. Պատարագի ժամանակ կը ճաշակենք Տիրոջ քաւչարար Մարմինն ու Արիւնը: Ս. Հաղորդութեամբ մաքրուելով մեր մեղքերէն՝ կը նորոգուինք եւ նոր արարած կը դառնանք, որովհետեւ Քրիստոս Իր մէկ անգամ պատարագմամբ փրկութիւն շնորհեց մեզ: Պօղոս առաքեալը կ'ըսէ. «Նմանեցէ՛ք Աստուծոյ, որպէս սիրելի զաւակներ, եւ ընթացէ՛ք սիրով, ինչպէս Քրիստոս սիրեց մեզ եւ Իր անձը մասնեց մեզի համար՝ որպէս անուշահոտ պատարագ եւ զոհ Աստուծոյ» (Եփես. 5.1-2):

- **Ի՞նչ կ'ըսէ Պօղոս Առաքեալը այս միութեան մասին:**

Երբ Ս. Պատարագի ժամանակ գործածուող մէկ ամբողջական նշխարը կը բաժնուի հաւատացեալներուն, անորմով անոնք կը միանան իրար: Նոյնն է նաեւ զինի՞ի դէպքին մէջ: Երբ ընծաները կը դադրին ըլլալէ հաց եւ զինի, այլ՝ Քրիստոսի ճշմարիտ Մարմինն ու Արիւնը, միայն այդ ժամանակ է որ կը զգանք Ս. Հաղորդութեան Խորհուրդին իրական զօրութիւնը, բաժնեկից կը դառնանք Տիրոջը եւ իրար՝ վերածուելով Քրիստոսի խորհրդական մարմնին՝ Եկեղեցոյ, որուն զուխը յաղթանակած յարուցեալ Տէրն է: Քրիստոնէութեան իսկական իմաստն ու խորհուրդը այս եկեղեցացման եւ միութեան մէջ են, ուստի Տիրոջ անխնջ առաքեալը կ'ըսէ. «Օրհնութեան բաժակը, ան որ կ'օրհնենք, արդարեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի Արեան. Հացը, որ կը կտրենք, արդարեւ հաղորդութիւն չէ՞ Քրիստոսի Մարմնին. Որովհետեւ մէկ հաց, մէկ մարմին ենք բոլորս, քանի որ բոլորս ալ այդ միակ հացն ենք կ'վայելենք» (Ա Կորնթ. 10.16-17):

Շաբթուայ խորհրդածութիւնը

- «Եւ մենք բոլորս շատ հպարտութիւն ունինք: Բառերը մեզի չեն խոնարհեցներ: Ահաւասիկ Տէրը թոյլ կու տայ ամէն տեսակի ամօթալի վիճակի մէջ իյնալու, որպէսզի մարդը ակամայ գայ իր աննշան եւ անշուք ըլլալու գիտակցութեան: Մեր ամբողջ գեղեցկութիւնը՝ ամբողջ բարին Տիրոջ մէջ է եւ Տիրոջ միջոցով է»:

Հայր Նիկոն Վորոբյով

- «Աստուած կը հարստացն է այն հոգին, որ ամէն ինչէն ինքզինք կ'ազատէ»:

Ս. Հայր Պիոյ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճարի Կիրակնօրեայ Վարժարանը կարիքն ունի
ուսուցիչներու՝ դասաւանդելու գծագրութեան դասընթացքներ:

Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել
քարտուղարութեան՝ (514) 279-3066
տուեալները ուղարկել հետեւեալ Ե-Հասցէին
stgregorychurch@gmail.com

Շնորհակալութիւն

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՅԱԼԳՍԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ Հոգեհանգստեան
Պաշտօն խնդրելու համար Եկեղեցի հեռաձայնել պահանջուած
հոգեհանգիստի թուականէն մէկ շաբաթ առաջ
մինչեւ այդ շաբթուայ Հինգշաբթի կ.ե. ժամը 5-ը:

Ե-Հասցեով (e-mail) խնդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ
խնդրանք պէտք է [հաստատուին եւ վերստուգուին](#) քարտուղարութեան
հետ [հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ](#)՝ (514) 279-3066 թիւին:

Շնորհակալութիւն
Եկեղեցւոյ Գրասենեակ



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ

ԱՐՁԱԿՈՒՄ

(Մեղքերու թողութիւն, որ կ'ըսէ քահանան)

Թող ամենազօր Տերը ողորմի քեզի
եւ թողութիւն շնորհէ քու բոլոր յանցանքներուդ,
եւ թէ՛ մոռցածներուդ:
Իսկ ես՝ քահանայական կարգիս իշխանութեամբ
եւ աստուածային հրամանին համաձայն՝ թէ «ինչ որ
երկրի վրայ արձակէք՝ երկինքի մէջ ալ
արձակուած պիտի ըլլայի,
Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով
կ'արձակեմ քեզ՝ մտածումով, խօսքով ու գործով
կատարած բոլոր մեղքերէդ,
եւ վերստին քեզ կը յանձնեմ
սուրբ Եկեղեցոյ խորհուրդներուն,
որպէսզի ինչ բարիք որ գործես՝ Աստուծոյ քով
բարեգործութիւն նկատուի քեզի համար
եւ հասնիս յաւիտենական կեանքի փառքին. Ամէն:

Absolution

(Donnée par le prêtre)

Que Dieu ami des hommes, te fasse miséricorde
et t'accorde la rémission et te pardonne toutes tes
transgressions, celles que tu as confessées
comme celles que tu as oubliées. Et moi, en vertu
de mon ordination au ministère sacerdotal,
conformément au commandement divin : <ce que
tu délieras sur terre sera délié dans les cieux >, je
te délie de toutes les péchés commis en pensée,
en paroles et en actes, au nom du Père, du Fils et
du Saint-Esprit et je te remets aux saints mystères
de l'Eglise afin que toutes les bonnes actions que
tu accompliras dorénavant contribuent à ton salut
et à ta gloire dans la vie éternelle. Amen.

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 7 Դեկտեմբեր 2019

Ս. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԶՄԻՌՆԱՅԻ ԱՔԱՆՉԵԼԱԳՈՐԾԻ ՑԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտակայքը): Փոքր հասակին կը կորսնցնէ մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողները եւ կը մեծնայ իր մօրեղբօր՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքին տակ: Աւետարանական պատգամը՝ «<Վաճառիր ունեցուածքդ եւ բաժնէ աղքատներուն>>» (Կանոն. Մտթ. ԺԹ 21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ խնամելով աղքատները, հիւանդները, բանտարկեալները եւ որբերը: Ժողովուրդին կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադրիր ամենուր Աւետարանը քարոզելէ: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, մասնակցած է 325 թուականին Նիկիոյ Տիեզերածոճողին:

Ան մահացած է 326 թուականին: Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Սանտա Կլաուս անունով:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Նիկողայոս Զմիւռնացի Մքանչելագործ հայրապետին յիշատակութեան տօնը կը նշէ երկու անգամ՝ Ս. Խաչի տասներորդ Կիրակիին յաջորդող շաբաթ օրը եւ Յիսնակի երկրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019

ԲԱՐԵԿԵՆՆԱՆ Ս. ՅԱԿՈԲԻ ՊԱՇՏԻ

Բարեկենդան կը կոչուի շաբաթապահներուն եւ Մեծ Պահքին նախընթաց օրը: Բարեկենդանին կը թոյլատրուին չափաւոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր եւ ուտեստեղէններ՝ ի հետեւութիւն Եղիային ուղղուած հրեշտակի խօսքին. «Եղի, կեր, որովհետեւ երկար ճամբայ պիտի երթաս» (Թագ. 19:7): «Բարեկենդան» բառացի իմաստով կը նշանակէ կենդանութիւն, բարի կեանք: Իսկ յաջորդ օրէն կը սկսի պահքը, որ կը տեսէ Երկուշաբթիէն մինչեւ Ուրբաթ:

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2019

ՅՂՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏՈՒԱՍԾԱՆԻ

Ս. Աննայի՝ Մուրբ Աստուածածինով յոյութիւնը նկարագրուած չէ Աստուածաշունչ մատենանի մէջ: Ան մեզի փոխանցուած է Եկեղեցւոյ Սրբազան աւանդութեան շնորհիւ:

Մուրբ Կոյսի ծնողները՝ Ս. Յովակիմն ու Ս. Աննան, երկար ժամանակ երեխայ չէին ունենար, քանի որ վերջինս ամուլ էր: Օր մը, երբ Աննան պարտեզ կ'իջնէ՝ աղօթելու, յանկարծ կը յայտնուի Տիրոջ հրեշտակը եւ կ'աւետէ, որ ինք գաւակ պիտի ունենայ, որուն երանի պիտի տան բոլոր ազգերը: Աննան գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ, որ լսեց իր անդադրում աղօթքները ու գթաց իրեն: Ան կը խոստանայ իր գաւակին Աստուծոյ նուիրել: Նոյն այս տեսիլքը կ'երեւայ նաեւ Ս. Յովակիմին՝ յայտնելով բարի լուրը: Մուրբ Կոյսին հայրը նոյնպէս փառք կու տայ Բարձրեալին այդ մեծ շնորհքին արժանացնելուն համար: Բարեպաշտ ծնողներուն

աղաչանքները լսելի կ'ըլլան եւ կը ծնի դուստրը, որուն կ'անուանեն Մարիամ, այսինքն՝ լուսաւորուած: Ան էր այն ընտրեալ անօթը երկրիս վրայ, որուն Աստուած իր առաքինութիւններուն ու արժանիքներուն շնորհիւ պատուեց ըլլալու Բանն Աստուծոյ մայրը: Որպէս մայր ան անհանգստացաւ, տառապեցաւ իր Որդիին համար, սակայն երբեք չերկնչեցաւ ու չընդդիմացաւ Աստուծոյ՝ քաց գիտակցելով Բարձրեալին իրեն վստահուած առաքելութեան կարեւորութիւնը:

Հայ եկեղեցին Ս. Աննայի՝ Սուրբ Աստուածածինով յղութեան տօնը, հաստատուն կերպով կը նշէ Դեկտեմբեր 9-ին:

INVITATION

À l'occasion du 49-ème anniversaire de l'achat,
de la consécration et dénomination de la Cathédrale
Armenienne

St. Grégoire l'Illuminateur de Montréal

Le Père David Margaryan
et le Conseil Paroissial de la Cathédrale

ont l'honneur de vous convier

dimanche 15 decembre 2019 à 10:30h

à la Sainte Messe solennelle qui sera célébrée
par Sa Grace Monseigneur

ABGAR HOVAKIMYAN

Primat Diocese Armenienne du Canada

**Prière d'Action de Grâce pour les bienfaiteurs
de la Cathédrale**

*Office de Requiem pour le repos des âmes des disparus,
serviteurs et bienfaiteurs de la Cathédrale*

*La Messe sera interprétée par la chorale "Gomidas"
Sous la direction de Sarkis Barsemyan*

*A l'issue de la Sainte Messe, une réception aura lieu
dans la salle Marie Manoogian organisée
par l'Union des Dames et Auxiliares de la Cathédrale,
qui sera précédé par le programme musical.*

Bureau de l'église



**Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆՄԱՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
ՇՆՈՐՀԱՌՐ ԼՈՐ ՏԱՐԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՐ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑՑ**

ԱՄԱՆՈՐ - ԼՈՐՅՆԷ

**Գործըջարբի, 1 Յունուար 2020, առաւօտեան ժամը 11:00-ին
ՍՈՒՐԲ ԵՒ ԱՄՄԱՅ Պատարագ
Պատարագիչ եւ քարոզիչ՝ - ԱՐԺ. Տ. ՂԱԻԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Յաւարտ Ա. Պատարագի- ԼՈՐՅՆԷԻ արարողութիւն եւ բաշխում**

ԾՐԱԳԱԼՈՑՑ Ա. ՇՆՆԴԵԱՆ - Կիրակի, 5 Յունուար 2020

Սկիզբ ժամերգութեան - երեկոյեան ժամը 5:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ - երեկոյեան ժամը 6:00-ին
ԱՍՏՈՒԱՏԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - երեկոյեան ժամը 6:30-ին
Ա. ԳՐԱԿԻՆ ԽԱՏՈՒԱԾՆԵՂ Կ'ՆՈՆԹԵՂՈՅՆ
Գ.Բ.Ը.Մ.-ի ԱՐՄԵՆ ԶԷՂԷ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ աշակետունեղ
Պատարագիչ՝ - ԱՐԺ. Տ. ՂԱԻԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

**ՏՕՆ ՇՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱՏԱՑՆՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻԱՏՈՒՄ**

ՀԱՆԴԻՍԱՌՐ Ա. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶՐՈՐՅՆԷՔ
Երկուշաբթի, 6 Յունուար 2020
Սկիզբ ժամերգութեան - առաւօտեան ժամը 9:30-ին
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ – ժամը 10:30-ին
Պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝
ԱՐԺ. Տ. ՂԱԻԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ, Հոգեւոր Հովիւ
Յաւարտ Ա. Պատարագի՝ Զրօրինէջի Արարողութիւն
Կնքահայրութեամբ՝ Տիար ՄԱՆՎԷԼ ՄԱՐԿՈՍԵԱՆ
**Յաւարտ Ա. Պատարագի ՏՕՆԱԿԱՆ ԾԱԵԿԵՐՈՑԹ «Մարի Մանուկեան»
սրահին մէջ Մուտքի Լուեր՝ \$25**


ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌՆԵՐՑ



Հոգեհանգստեան Արարողութիւն – Երեքշաբթի, 7 Յունուար 2020,
Առաւօտեան ժամը 11:00-ին

ՏՆՕՐՅՆԷՔ

Ա. ՇՆՆԴԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՄԵՐՈՑԻՆԷՔ փափաքող Խաւատացեալներէն կը
խնդրենք հեռաձայնել գրասենեակ՝ (514) 279-3066





Cathédrale Arménienne St Grégoire l'Illuminateur

Bonne Année et Joyeux Noël

Calendrier de la période des Fêtes

Mercredi le 1er janvier 2020 à 11h00 Messe de Nouvel An

Célébrant : **le R.P. David Margaryan**

qui prononcera l'homélie

Bénédictio et distribution des grenades

à la fin de la Messe



Dimanche le 5 janvier: Vigile de la Nativité et de la

Théophanie de N.S. Jésus Christ

Début des Célébrations à 17h 30 - Messe à 18 heures

Lectures Bibliques à 18h30 par les élèves École d'Armen Québec de l'U.G.A.B.

Célébrant - **le R.P. David Margaryan**, Prêtre de la Paroisse

qui prononcera l'homélie



Lundi le 6 janvier : Noël et Épiphanie

Début des Célébrations à 9h30

Messe solennelle à 10h30 - La Messe sera célèbre par

le R.P. David Margaryan, Prêtre de la Paroisse

Bénédictio de l'eau, sous le parrainage de M MANVEL MARKOSYAN

à la fin de la Messe.

Après les Cérémonies un repas de Noël Arménien sera servi dans

la salle " Marie Manoogian" Prix de participation \$25



Mardi le 7 janvier 2020, à 11 heures, Office de requiem

pour tous les défunts

BÉNÉDICTION DE FOYER

Bénédictio des foyers à l'occasion de Noël prière d'appeler

le secrétariat de l'Église (514) 279-3066

ՆՈՒԻՐԱՏՈՒՌԹԻՒՆ ԵՎԵՂԵՅԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mrs. Rita Karakas \$64.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE VAHAKN AZNAVOUR:

Manuk & Irma Elmokyan, Mr. & Mrs. Garo Nazirgianian \$100,
Mr. & Mrs. Alex & Nora Kunter, Mr. & Mrs. Ara Sevan,
Mr. & Mrs. Nurhan Karagoz, Mrs. Anna Inak, Mrs. Rita Karakas \$50,
Mr. Levon Simonyan \$30.

HOKEHANKISD:

THE LATE HOVSEP & BERJUHI EGIAN:

Miss Nazeli Egian \$100

THE LATE KARAKAS FAMILY:

Mrs. Rita Karakas \$200, Mrs. Anahit Tavitian \$100,
Mr. Avedis Djihanian, Mr. Levon Simonyan,
Dr. Arto Demirjian,
Mr. Vahe Keresteciyan \$50.

THE LATE HAIG MANOUKIAN:

Mr. & Mrs. Garbis & Hasmig Aposhian \$50,
Mr. Boghos Ajamian \$40,
Mr. & Mrs. Vahan Shakaryan \$25.

THE LATE MARO MAZMANIAN:

Mr. & Mrs. Levon Sevuntz \$100.

THE LATE MARIE

NAZARETIAN BALTAYAN:

Mr. Stephan Baltayan, Mr. Avedis Djihanian,
Mrs. Albera Sioufi \$30.

THE LATE TER-STEPANYAN FAMILY:

Mrs. Karine Ter-Stepanyan \$150.

YOUGHAKIN X-MAS:

Mr. Simone Farahian \$40.

49
th



ՏԱՐԵՂԱՐՁ

Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ Գնման, Օծման եւ Անուանակոչութեան

ANNIVERSARY

of the St. Gregory the Illuminator Armenian
Cathedral of Montreal

Հովանաւորութեամբ

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմին

Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019

Sunday, December 15th, 2019

Սկիզբ Ս. Պատարագի առաւօտեան ժամը 10:30-ին

Պատարագի՝

Առաջնորդ Սրբազան Հայր

Յաւարտ Ս. Պատարագի

Տօնական ճաշկերոյթ եւ Գեղարուեստական Յայտագիր
«Մարի Մանուկեան» սրահին մէջ

Anniversary Banquet & Cultural Program in «Marie Manoogian» Hall


Տեղերու ապահովման համար հաճեցէք հեռաձայնել

Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

Մինչեւ 10 Դեկտեմբեր 2019

Please call to reserve (514) 279-3066

till December 10th, 2019





ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ Ս. ԾՆՆԴԵԱԼ ԵՒ ԿԱՂԱՆԴԻ ՀԱՆԴԵՍ

Օրինություն՝
Գանատահայոց ԹԵՄԻ Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար եպս. Յովակիմեանի



Կազմակերպություն՝

ԱՇՅՕՇ Մոնթրեալի «ԿԱՄԱՐ» Երիտասարդաց Միություն
Ամասոբեայ թատերական Ներկայացում
"ÉGLANTINE ET LE CAPITAINE POMPIDOU NOËL"



Կիրակի, 22 Դեկտեմբեր 2019 կ.ե. ժամը 2:00-ին



«Մարի Մանուկեան» սրահին մեջ
615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

- Հաճելի մանկական ներկայացում
- Տոնական հիւրասիրություն
- Վիճակահանություն
- Նուրերներ երեխաներուն

Մանրամասներու եւ ամրագրման համար
կը խնդրուի հեռաձայնել
(514) 928-2536 Գագիկ,
(514) 792-2866 Փառանձեմ,
(514) 279-3066 քարտուղարուին



Մուտքի նուեր՝ \$20



Christmas and New Year's Party for Children

With the blessings of His Grace
Bishop Abgar Hovakimyan
Primate of the Armenian Diocese of Canada



ACYOC Montreal's "Kamar" Youth Association
presents:

New Year's theater show:

"ÉGLANTINE ET LE CAPITAINE POMPIDOU NOËL"



Sunday, 22 December 2019 at 2:00pm



"Marie Manoogian" Hall
615 Avenue Stuart
Outremont, QC H2V 3H2

- Fun theater performance
- Delicious dishes
- Lottery
- Gifts for children



For details and reservations, please call:

Gagik: (514)928-2536

Parandzem: (514)792-2866

Secretariat: (514)279-3066



Entrance fee: \$ 20





ՆՈՐՅՆԷ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի

2020 թուականի Չորեքշաբթի,
Յունուար 1-ին
առաւօտեան ժամը 11:00-ին

Ամանորեայ Սուրբ եւ Ամմահ Պատարագ

Պատարագիչ եւ քարոզիչ`

Արժ. Տէր Դաւիթ քհնյ. Մարգարեան
Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի պիտի ունենայ

(13:00-ին) Նորինէքի արարողութիւն եւ բաշխուի մեր հայազն
հաւատացելոց

Բոլորը սիրով կը հրաւիրենք աղօթակից ըլլալու 2020-ի անդրանիկ
Պատարագին եւ մասնակից` Նորինէաց բացառիկ կարգին:
Բոլորիդ ներկայութիւնը եւ աղօթքը ցանկալի են:

ՇՆՈՐՀԱԽՐ ԱՄԱՆՈՐ ԵՒ ԳԱԼԷ ՍՈՒՐԲ ՇՆՈՒՂ

Հոգեւոր հովիւ եւ Ծխական խորհուրդ

Cathédrale Arménienne St. Grégoire l'Illuminateur

La bénédiction des Grenades

Première Messe de l'An,

Mercredi, 1er janvier 2020 à 11 heures

Celebration et homélie par

le Rév. Père David Margaryan

Par la suite, la cérémonie de la bénédiction des Grenades et la
distribution aux fidèles aura lieu à 13 heures

Vous êtes cordialement invités à participer à ces célébrations pour
augurer un nouvel an de paix et de prospérité.

Votre présence et vos prières sont sollicitées.

Le prêtre et le Conseil paroissial



WEEK of
PRAYER
for CHRISTIAN UNITY
2020

SEMAINE de
PRIÈRE
pour L'UNITÉ DES CHRÉTIENS
2020



*"They showed us
unusual kindness."*
(Acts 28:2)

*« Ils nous ont témoigné une
humanité peu ordinaire »*
(Actes 28:2)

January 19, 2020 / 19 janvier, 2020

DATE / DATE :

3:00pm/15h00

TIME / HEURE :

Armenian Apostolic Church/
Église arménienne apostolique
615 Ave Stuart, Outremont QC H2V 3H2


PLACE / LIEU :



weekofprayer.ca | semainedepriere.ca



METRO OUTREMONT



STATIONEMENT/PARKING





Օրհնութեամբ՝
Տ. Արզար Եպս. Յովակիմեանի
Բարեխնամ Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝
Սոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր
Տաճարի



«Կոմիտաս» Դպրաց Դասը
կը ներկայացնէ

«ԿԱՏԱԿ ԵՐԳ»

Երաժշտական Պարանցիկ
Յերեկոյթը



Կիրակի, 2 Փետրուար 2019-ին

Ս. Պատարագի արարտին

կ.ե. ժամը 1-ին Եկեղեցւոյ «ՄարիՄանուկեան»
սրահին մէջ:

- Հայկական Ժողովրդային Պարեր
- Սիրային «Կատակ Երգ»-ի ճոխ երգեր
Գեղարուեստական բեմադրութեամբ
- Հայկական արանդական ուտեստ եւ Հայկական Գինի

Դիմել Սարգիս Պարսէմեանի barsemians@gmail.com



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Սոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատորակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը ըննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արծանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Մեր երեխաներուն համար
Պահպանե՛նք ժառանգութիւնը, կերտե՛նք
ապագան**

**Սոնթրեալի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ եկեղեցին շտապ
վերանորոգման կարիքն ունի:**

**Ճարտարապետական ուսումնասիրութիւնները
ի յայտ բերին թէ եկեղեցոյ արտաքին
շաղախներն ու ենթակառոյցները անմիջական
վերանորոգման կը կարօտին: Յառաջիկայ հինգ
տարիներու ընթացքին, գաղութս պետք է
հաւաքէ բաւական նշանակալի գումար մը: Իսկ
այս առաջին փուլը կը կարօտի \$ 250,000 ի:
Շտապ:**

**Եկե՛ք միասնաբար ապահովե՛նք մեր գաղութի
ապագան:**



POUR NOS ENFANTS

Pour protéger notre héritage : Pour bâtir notre future

L'église St. Grégoire l'Illuminateur de Montréal a un besoin URGENT d'initier et d'exécuter des restaurations majeures à la structure de la bâtisse

Les études architecturales et d'ingénierie ont conclu que la bâtisse de notre élégante église cathédrale de 90 ans nécessitera pour les cinq (5) années prochaines d'importantes

restaurations de la maçonnerie de pierre sur son extérieur, des supports des vitraux plombés des fenêtres dans son intérieur et d'autres modifications structurelles et ceux-ci requièrent un montant assez élevé. La phase 1 de ses travaux estimés à \$250,000 a déjà démarré

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire

Svp donnons-nous la main pour ramasser les fonds nécessaires et assurer le succès de cette initiative communautaire



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GREGOIRE L'ILLUMINEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2